

ԴԱՎԱԴԻՐ ՊԱՏՐԻԱՐՔԸ - THE CONSPIRATOR PATRIARCH

Posted on September 3, 2023 by Keghart



Category: [Opinions](#)



In the late '40s, Turkish Military Intelligence (TMI) "adopted" an abandoned baby boy and handed him to a rabidly nationalistic Turkish family. From then on, the TMI made monthly cash payments to the family. When the boy turned sixteen, the TMI revealed to him his background and told him he was being groomed for a vital national mission. He was given a false Armenian identity and sent to Antelias, Lebanon to become a seminarian. The teenager eventually became a priest and settled in Jerusalem. He later became Patriarch. The TMI, which had been in contact with him throughout his clandestine life, told him the time had come to accomplish his mission: eliminate the Armenian presence in Jerusalem. To realise the plot, he had to sell Armenian lands under the pretext of long leases. He was told the Israeli authorities were very keen to secretly help him begin the destruction of Armenian Jerusalem.

The above is, of course, fiction. But had he been a Turkish mole, Patriarch Nourhan couldn't have been more successful in precipitating the near-destruction of Armenian Jerusalem. While in the past two years Keghart.org has exposed many of the "patriarch's" shortcomings, the below open letter by Tsolag Momjian, long-time honorary Consul of Armenia to Israel and Palestine, reveals further crimes of the conspirator Patriarch (13 August 2023). The header is Keghart.org's--**Editor**

From the office of
TSOLAG MOMJIAN

Հայոց Երուսաղէմի «Կովերու Պարտեզի համաձայնագրի» վերջին զարգացումները.
Եթէ ամփոփելու ըլլանք, իրավիճակին հանգամանաց պատկերը հետեւեալն է՝ Նուրհան պատրիարք Հայոց վանքին կէսը ծախեց, մեր փառքը ապականեց եւ, կրնանք ըսել, մեր ամբողջ ապագան օտար ազգի մը կամ պետութեան մը յանձնեց:

Այժմ մենք պայմանագրի ամենակարեւոր իրականութեան առջեւ ենք:

27 Յուլիս 2023-ին Պարետ Երեցեան Մայք Սարեանին հետ հարցազրոյցի ատեն ըսաւ. «Իսրայէլի Ներքին գործերու նախարարութեան ներկայացուցիչը այցելեց պատրիարքին: Պատրիարքարանին փաստաբանը հոն էր: Եւ ըսին. «Մենք կ'ուզենք երրորդ անձ մը, կամ անձ մը, որ պատրիարքին ստորագրութիւնը վաւերացնէ, կամ վկայէ, որ պատրիարքն ինքը ստորագրած է վրան» :

Պարետին վկայութեամբ (տե՛ս Մայք Սարեանին տրուած հարցազրոյցը), պատրիարքը ըսած է. «Հայր Պարետը հոս է, ինքը թող ըլլայ երրորդ անձը, թող ստորագրէ»:

Այստեղ ամենակարեւորն այն է, թէ ինչո՞ւ Իսրայէլի Ներքին գործերու նախարարութիւնը կու գայ եւ Նուրհան պատրիարքէն ստորագրութիւն մը եւս կը պահանջէ: Ինչո՞ւ Նուրհան պատրիարք, Պարետ եւ փաստաբաններ չեն ըսեր Ներքին գործերու նախարարութեան ներկայացուցիչին. «Դուք ո՞վ էք: Մենք ստորագրեցինք պայմանագիրը Տանի Ռոթմանի՞ն հետ»: Այլ խօսքով՝ պատրիարքը, լուսարարապետը եւ պատրիարքէն նշանակեալ՝ ատենի կալուածոց տեսուչ Պարետ Երեցեանը, չեն խնդրած կամ պահանջած իշխանութեան ներկայացուցիչէն (ո՞վ որ է), որ պետական

իշխանութիւնը չմիջամտէ Հայոց պատրիարքարանի եւ Սրբոց Յակոբեանց վանքի
ներքին հարցերուն:

Բոլորը գիտէին, որ Իսրայէլի կառավարութեան հետ է համաձայնագիրը: Իսրայէլի
ներկայիս իշխանութիւնը, քաղաքական նկրտումներով տոգորուած, նպատակ դրած է
Հայոց վանքը ձեռք ձգել, իսկ Տանի Ռոթման միայն ճակատ է: Սա շատ յստակ ցոյց կու
տայ, թէ Իսրայէլի Ներքին գործերու նախարարութիւնն էր, որ վարագոյրին ետեւէն
բանակցութիւններ կը վարէր պայմանագիրին շուրջ եւ ոչ թէ պարոն Տանի Ռոթմանը,
որու մասին Պարետ ըսաւ, թէ «շատ ազնիւ եւ քաղաքավար մարդ մըն է»:

Մինչեւ վերջին վայրկեանը Տանի Ռոթման չէր հաւատար, որ նման միակողմանի եւ
հայոց այդչափ վնասակար պայմանագիր մը կրնայ յաջողցնել, զայն կնքել եւ հասցնել
վաւերացման: Այն ատեն ան նոյնիսկ չունէր այն ընկերութիւնը, որուն անունով
հետագային ստորագրեց պայմանագիրը, որով յաջորդ օրն անմիջապէս գրանցեց
նորաստեղծ կազմակերպութիւն մը (XANA GARDENS organization) Պնէ Բրաքին մէջ:

Վանքի փաստաբաններուն ուղղակի պարտականութիւնն էր օր առաջ ստուգել այս
անձին ինքնութիւնը ու անոր ընկերութեան որպիսութիւնը: Սակայն որեւէ պատշաճ
իրաւաքննութիւն (Due Diligence) չեն ըրած: Անզգո՛յշ եւ անփո՛յթ գտնուած են:

Կասկած չունինք, որ այս «պայմանագիրը» հետագային պիտի դասաւանդուի աշխարհի
իրաւաբանական համալսարաններուն մէջ որպէս Հայ Եկեղեցւոյ Երուսաղէմի հոգեւոր
առաջնորդներու ծանծաղամտութեան եւ ապիկարութեան ապացոյց, կամ իբրեւ
տիպար օրինակ, թէ ինչպէս հայ ազգը կորսնցուց իր պատմական երբեմնի փառքը:

Փոխանակ Տանի Ռոթմանի, «որուն Նուրհան պատրիարք համակրած եւ սիրած էր
հանդիպումին առաջին կէս ժամուան ընթացքին», Իսրայէլի Ներքին գործոց
նախարարութիւնը ըսած է Նուրհան պատրիարքին, որ իր ստորագրութիւնը բաւարար
չէ: Նախարարութեան պահանջին վրայ է, որ Նուրհան պատրիարք իր անձնական
շահերուն համար հրամայած է, որ փոփոխութիւններ ըլլան համաձայնագրին մէջ:
Նուրհան պատրիարք շատ լաւ գիտէր, որ «Կովերու Պարտեզ»ի համաձայնագիրը
համաձայնագիր մըն է Իսրայէլի իշխանութեան հետ, եւ աղէկ գիտցած է, թէ ինչի՛ վրայ
կը ստորագրէ: Ան շատ լաւ գիտէր, որ հարցը քաղաքական է: Իսկ հիմա գիտցած է, որ
իր ծրագիրն այլեւս չի յաջողիր գաղտնի պահել: Հիմա հասկցած է, որ իր ըրածը մեծ
սխալ մըն էր, եւ կը փորձէ պատիժէն փախիլ, նման յունաց Իրենիոս պատրիարքին, ով
փորձեց ճողոպրիլ, բայց չյաջողեցաւ:

Փաստաբաններ Եոսի Ավների եւ Մագեն Գուբդի կատարեցին ինչ որ պահանջեց
Իսրայէլի ՆԳՆ-ը եւ չպաշտպանեցին Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Առաքելական
Աթոռին շահերը:

Ես քաջատեղեակ եմ, որ նոյնիսկ Իսրայէլի Արտաքին գործերու նախարարութիւնը
տեղեակ էր եւ ան եւս ներգրաւուած էր այս հարցին: Երբ Իսրայէլի արտաքին գործերու

Նախարար Էլի Քոհէնին հարցուցին այս խնդրին մասին, անոր դէմքին վրայ լայն ժպիտ մը ուրուագծուեցաւ, եւ ան ոչինչ մեկնաբանեց:

Պարետ ինքզինք կը կեղծէ՝ առանց անդրադառնալու, որ ինքն էր ըսողը, թէ ինք եւ պատրիարքը պարզապէս անմեղ «commercial deal» մը ստորագրեցին: Ան եւ պատրիարքը կ'ամբաստանեն եւ կը մեղադրեն պաղեստինցիներն ու յորդանանցիները, թէ անոնք խնդիրը հետագային քաղաքական հարցի վերածեցին: Ի միջի այլոց, Երեցեան Մայք Սարեանին հետ հարցազրոյցին ատեն ըսաւ, որ ինք եւ Հայր Սամուէլ Աղոյեան պատրիարքին ըսած են, որ այս հարցը պետք է Տնօրէն Ժողովին առջեւ բերուի, ինչը պատրիարքը մերժած է: Վերջը Հայր Սամուէլ ստորագրած է վկայութիւն մը, որ այս հարցը բերուած էր Տնօրէն Ժողովին առջեւ:

Եթէ Նուրիան պատրիարք իրականութիւնն ըսած ըլլար միաբանութեան, Տնօրէն Ժողովը պետք չէ հրապարակէր այդ յայտարարութիւնը պաղեստինցիներուն եւ յորդանանցիներուն առած քայլին դէմ, որով Նուրիան պատրիարքի ճանաչումին հրամանագիրը (Ֆերմանը) կը սառեցնէին 11 Մայիս 2023-ին: Նուրիան պատրիարք այս հարցը չբերաւ Տնօրէն Ժողովին առջեւ, որովհետեւ շատ լաւ գիտէր, որ Ժողովին անդամները զայն պիտի չվաւերացնէին:

Որո՞նք են իբրեւ պատրիարք Նուրիան Մանուկեանի այս աներեւակայելիօրէն անխելք, չափազանց ապուշ քայլին պատճառները:

Դիտարկենք այս մարդուն խօսքերը:

- «Պզտիկուց ծնողներս ինծի անտեսեցին: Տասներեք տարեկանիս ինծի Անթիլիասի դպրեվանքը նետեցին»:
- «Երբ փոքր էի, եղբայրս ինծի ապտակեց: Մինչեւ կեանքին վերջը հետը չի խօսեցայ»:
- «Ես ամեն բան պիտի ծախեմ եւ հայաստանցիներուն բան մը չպիտի ձգեմ»:
- «Եթէ ես չծախէի՝ հայաստանցիները պիտի ծախէին»:
- «Երանի՛ ձեզի: Դուք ամուսնացած էք եւ կին ունիք: Ես կին չունիմ»:

Երբ Նուրիան արքեպիսկոպոս պատրիարք ընտրուեցաւ, առաջին յիմար եւ անքաղաքավար բանը որ ըրաւ՝ համացանցին մէջ հրապարակեց կաթողիկոսին դէմ ծաղրական բաց նամակ մը, ցոյց տալով իր բարոյական մակարդակը, վրէժխնդրութիւնը եւ այն որ աղքատ մնացած է տակաւին: Ան իր շուրջի «բարեկամ»ներէն գովասանքներ ստացաւ. «Պռաւօ՛, Սրբազան, հիմա փաստեցիր, որ ջիղ ունիս»:

Այս խօսքերը խորին կապ ունին Նուրիան պատրիարքի վերաբերմունքին, ապրելակերպին եւ վարքին հետ:

Այս բոլորը մտային հիւանդ մարդու մը հոգեբանութիւն է:

Նուրհան պատրիարք անտեսեց իր հոգեկան առողջութեան համար մասնագետի բուժումը, եւ փոխարէնը դիմեց ինքնաբուժման:

Տիկիներուն հազարաւոր տղարներ արժող ադամանդէ մատանիներ կը նուիրէր, ի մասնաւորի այն տիկիներուն, որոնց հանդէպ ունենար երեւակայական համակրութիւն, յղացողական կապ մը, քանզի ինք կին չունէր: Ուրիշներուն ոսկի ժամացոյցներ կը նուիրէր... եւ այլն, եւ այլն: Այդ դրամներուն սկզբնաղբիւրը ո՞ր է:

Պարետ Մայք Սարեանի հետ ունեցած հարցազրոյցին ատեն ըսաւ, որ Տանի Ռոթման երեք անգամ զանգահարեց եւ ուզեց օգտակար ըլլալ, իսկ պատրիարքը մերժեց Տանիին: Շատ յստակ է, որ պատրիարքը կը գիտակցէր, որ Տանի Ռոթման զինք խաբեց եւ այս հարցը շատ արագ երեւան հանեց:

Շատ կարելոր է, որ երկու միլիոն տոլարը, որ ստացեր է վաւերը այս պայմանագիրին համար, պէտք է անմիջապէս վերադարձուի հոն ուրկէ որ եկեր է, եւ հարկ է սկսիլ մրցոյթի գործընթաց մը հայազգի գործարարներու եւ դրամարկուներու (investors) միջեւ:

Ակներեւ է, որ Նուրհան Մանուկեան չըսաւ ամբողջ ճշմարտութիւնը եւ չհամագործակցեցաւ ո՛չ միաբանութեան, ո՛չ համայնքին եւ ո՛չ ալ փաստահաւաք փաստաբաններուն հետ: Ան չտուաւ բոլոր տեղեկութիւնները, որովհետեւ կը վախնայ եւ կ'ամչնայ իր ըրածին համար եւ կը փորձէ իր շուկայական նախնադարեան խորամանկութեամբ ծածկել իր գործած ոճիրը Հայ Եկեղեցիին, Սրբոց Յակոբեանց միաբանութեան եւ համայն հայ եւ քրիստոնէայ աշխարհին դէմ՝ միայն ու միայն իր անձնական հաճոյքին, առժամեայ զուարճանքին եւ ժամանակաւոր անձնական շահերուն ու հպարտութեան ախտին յագուրդ տալու համար:

Նուրհան պատրիարքին հրամանաւ՝ Հայր Կորիւն Պաղտասարեան Երուսաղէմ ժամանած փաստահաւաք իրաւաբաններուն հպանցիկ ցոյց տուած է ծախող համաձայնագիրը՝ էջերը արագ դարձնելով եւ կարճ բացատրութիւններ տալով: Հոն կը պակսէին կարելոր էջերը, օրինակ՝ դրամական վճարումներու էջը: Այս իրողութիւններն ի հարկէ կասկածներ կ'առաջացնեն, որ Նուրհան Մանուկեան անկեղծ չէ գտնուած եւ ինչպէս ինքն իսկ կ'ըսէ՝ «խաղեր խաղցած է» եւ կը վախնայ որ ի յայտ բերուի ճշմարտութիւնը, որովհետեւ ինք շատ լաւ գիտէ իր ըրածը:

Այսօր Նուրհան Մանուկեան պարտուած եւ վիրաւորուած «կեներալ» մըն է:

Ինչպէս յայտնի է, պարտուած եւ դաւաճան «կեներալ» մը չի կրնար անգամ մը եւս իջնել պատերազմի դաշտը:

Մանուկեան խոստացեր էր, որ երկու ամիս վերջ ամեն ինչ պիտի շտկուի եւ այս հարցը պիտի լուծուի: Անցեալին նաեւ, դեռ Պարետը «կարգալոյծ» ըլլալէն առաջ, Նուրհան պատրիարք խոստացած էր, որ ամեն բան մօտ օրէն պիտի վերջանայ, միամտաբար կարծելով, թէ իր դէմ ամեն հարց պիտի փակուի Պարետ Երեցեան մը վտարելով:

Այդ երկու ամիս ժամկետին մեծ մասը անցած է: Եթէ այս անգամ ալ ոչինչ փոփոխի՝ կը նշանակէ, թէ կա՛մ Նուրհան Մանուկեան կը խաբէ, կա՛մ ոչինչ կրնայ ընել, կա՛մ (ինչպէս ըսաւ Պարետ լրագրող Սագո Արեանի հետ վերջին հարցազրոյցին ատեն 21 Յուլիս 2023-ին), «Պատրիարքը կը մերժէ համաձայնագիրը ջնջել»: Հետեւաբար այդ է պատճառը, որ երեք անգամ մերժեց տեսնուիլ Տանի Ռոթմանի հետ այս հարցով (Երուսաղէմի Հայոց պատրիարքը մեծ ճնշումների տակ է) :

Այս պարագային Նուրհան պատրիարք պետք է մէկ կողմ քաշուի եւ վանքին ղեկավարումը յանձնէ աշխատասեր ու կարող միաբան հայրերու, որոնք համախորհուրդ եւ միասնաբար պիտի պատերազմին պատրիարքին գործած բոլոր ապօրինութիւններուն դէմ:

Լուսարարապետ Նուրհան 2013 թուականի Յունուարին պատրիարք ընտրուելէն քիչ ետք սկսաւ բռնապետի նման (dictatorial), ատելութեամբ, ոխակալութեամբ, վրէժխնդրութեամբ եւ անարդարօրէն կառավարել Սուրբ Աթոռը՝ չարաշահելով իր լիազօրութիւնները, խախտելով եւ ոտնակոխ ընելով անհատներու (ըլլայ հոգեւորական կամ աշխարհական) բոլոր իրաւունքները եւ մարդկային արժանապատուութեան տարրական սկզբունքները: Նուրհան պատրիարք անտեսեց եւ անարգեց Սրբոց Յակոբեանց միաբանութեան կանոնները: Հակառակ ազգային երկար ու ճիգ անանդութեան՝ Հայոց վանքը եւ բոլոր կալուածները իր սեփականութիւնը սեպեց, պատրիարքութիւնը փորձեց կառավարել առանց Տնօրէն Ժողովի եւ միաբանութեան գիտութեան: Ան միաբաններուն ծաղրական ժպիտով կ'ըսէր «մենք եղբայրներ ենք»՝ յընթացս սկսելով Հայոց վանքին կալուածները ծախել: Այս ձեւով ան ի ցոյց դրաւ իր անձնական նպատակները, անյաջող ղեկավարումը եւ մարդկային յատկութեանց արգահատելի «մակարդակը»:

Այն ինչ, որ կ'ըսէ Պարետ իր հարցազրոյցին մէջ, թէ «99 տարուայ վարձելը ընդունուած է», ճիշտ չէ:

1. Երջանկայիշատակ Թորգոմ Մանուկեան պատրիարքին օրով ընդունուեցաւ յաւելեալ դրոյթ մը Միաբանութեան Կանոնադրութեան մէջ, որով հողատարածք մը 49 տարիէ աւելի վարձակալութեան չի տրուիր:
2. Որեւէ կալուածական հարց պետք է ներկայացուի Տնօրէն Ժողովի հաստատման:
3. Եթէ վարձակալութիւնը մեծ հողամասի մը կը վերաբերի, ապա Ընդհանուր Միաբանական Ժողովը պետք է գայն քննարկէ՝ հաստատելու համար:
4. Հողամասին տուեալները պետք է հրապարակուին եւ հողամասը աճուրդի դրուի՝ վստահ ըլլալու համար, որ Հայոց վանքը կը կատարէ լաւագոյն գործարքը:

Այստեղ կը ցանկամ յաւելել քանի մը կետ:

Թորգոմ պատրիարքին ատեն, երբ գիտցուեցաւ, որ Յուսիկ Եպիսկոպոս Պաղտասեան անհաւատարիմ գտնուեցաւ պատրիարքարանիս նկատմամբ, ինձմէ օգնութիւն խնդրեց

Ես դիմեցի նշանաւոր իրաւաբան Առնոլտ Շպերին (Arnold Spaer), որ հօրս ընկերն էր Պաղեստինի բրիտանական հովանաւորութեան (British Mandate) շրջանին: Ան վերանայեցաւ այն պայմանագիրները, որ Յուսիկ եպիսկոպոս կնքեր էր պատրիարքին ստորագրութեամբ եւ Տնօրէն Ժողովին վաւերացմամբ: Պայմանագիրերուն մէջ փոփոխութիւններ կատարուեցան, անոնք կրճատուեցան մինչեւ 49 եւ 49 տարի, այսինքն ամենեւին ոչ այնպէս, ինչպէս Պարետ ըսաւ, թէ «Թորգոմ պատրիարքին օրով կնքուած պայմանագիրները 99 տարով էին»:

Մենք պետք է վերջ տանք ամբողջ հայութեան նկատմամբ Նուրհան պատրիարքի սպառնալիքներուն, խտրականութիւններուն եւ հալածանքներուն: Փաստաբանի միջոցաւ պետք է գանգատ ներկայացուի ներկայ իշխանութեան, եւ փաստաբանը պետք է տեղեկացնէ ամերիկեան դեսպանատունը:

Մէկ բողոքը կրնայ շատ բան չընել, բայց քանի մը բողոքներ կրնան շահ տ բան ընել:

«Կովերու Պարտեզ»ին հարցով Նուրհան պատրիարքին դեմ մեր պայքարը պետք է ըլլայ ոչ միայն Սուրբ Քաղաքին, այլ նաեւ Ամերիկայի Միացեալ Նահանգներուն մէջ, որպէս ԱՄՆ քաղաքացի Նուրհան Մանուկեանի դեմ, քանզի ան Հայոց վանքին դարերէ եւ հազարամեակներէ ի վեր շարունակուող, Աստուծոյ եւ Հայոց Եկեղեցւոյ վեհ պատմութիւնն ու փառքը փորձած է ապականել: Աստուած ո՛չ արացէ որ յաջողի...

Ապագային աւելի մանրամասնութիւններ կը ներկայացնեմ:



Յուլակ Մոմճեան
13 Օգոստոս 2023

Mailing Address: P. O. Box 19379, Jerusalem 97200

Tel: +972 2 5833994

Email: ahconsul@office-momjian.com

Տեսանիւթեր.

1) Father Baret Yeretsian Tonight with Mike

Sarian, Horizon Armenian TV, <https://www.youtube.com/watch?v=D7bNRY6vrRo>

2a)

<https://www.jordannews.jo/Section-109/News/Jordan-Palestine-no-longer-recognize-Armenian-Patriarch-Nourhan-Manougian-28607>

2b)

<https://gagrulenet/jordan-and-palestine-no-longer-recognize-armenian-patriarch-nourhan-manougian/>

Note: If above link does not open, go to gagrule.net and in the search box write

"Jordan and Palestine no longer recognize Armenian Patriarch Nourhan Manougian"

2c) <https://twitter.com/301arm/status/1657047977234399236>

2d) <https://www.newarab.com/news/pa-jordan-withdraw-recognition-armenian-patriarch>

3) Երուսաղեմի Հայոց պատրիարքը մեծ ճնշումներով տակ է. 1in TV,
<https://www.youtube.com/watch?v=MDv-gzwoYFw>

Comments



H - 2023-09-03 18:47:57

Mr. Momjian, thank you for a crystal clear narrative, for no better words, about the rats behind the potential collapse of centuries old Armenian community and properties in the The Holy Land. Whether it is sale, lease or other, the precious Armenian properties and Armenian presence in Palestine are in jeopardy because of clergymen Nourhan and (Baret) Khachig Yeretsian. Today, there are a few well known վասակ(s) in the nation, and many many fools (յիմար ժողովուրդ): To the malaise of the Armenian nation, Nourhan, khachig, and one other, top it all in this century. Trading land not their own, for personal wealth and glory. And yet. Mr. Momjian it isn't all lost. There are dedicated protestors against the sale/lease of church properties to Israel, and protectors of the properties and the community of The Holy Land. Clearly your article emanates leadership, hope, and promise. As you suggest, reach out to investors, and organize continued effective protests locally and abroad. We are mindful that because of their illegally acquired wealth, Nourhan and Khachig and others cannot be considered honorable citizens of this or any other country. After all, as clergymen at St James Cathedral in Jerusalem, their small monthly salaries could hardly feed chicken.